



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 02/20**

30.01.2020թ.

ք. Երևան

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը (նախագահող դատավոր Ա. Բաբայան, այսուհետ՝ Դատարան), 11.11.2019թ. որոշմամբ դիմելով ՀՀ Սահմանադրական դատարան, խնդրել է որոշել 27.01.2017թ. դրությամբ գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի և 27.01.2017թ. դրությամբ գործող խմբագրությամբ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2018թ.) 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Դիմողի կարծիքով՝ թիվ ՎԴ/7612/05/17 վարչական գործով կիրառման ենթակա 27.01.2017թ. դրությամբ գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասում բնօգտագործման վճարների (ընդ որում՝ օրենսդրի կողմից որպես պարտադիր բնորոշված վճարների) հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված հարկային մարմնի ուղղակի լիազորության ամրագրումը ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2009թ. թիվ ՍԴՈ-816 որոշմամբ՝ որպես օրենքից առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող և պարտադիր կատարման վարքագծի կանոններ սահմանող իրավական ակտով արտահայտված դիրքորոշման և 27.01.2017թ. խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասով նախատեսված քաղաքացիաիրավական պայմանագրի կողմ հանդիսացող պետական մարմնի կողմից այդ պայմանագրի շրջանակներում իրականացվող ստուգումների վրա հիշյալ օրենքի դրույթների չտարածվելու վերաբերյալ իրավակարգավորումների հետ համադրմամբ, համահունչ չէ իրավական որոշակիության սկզբունքին, որը հանդիսանում է իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը և հակասում է Հայաստանի Հանրապետությունը նաև որպես իրավական պետություն հռչակող ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի դրույթներին:

Դատարանը, մեջբերելով ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2009թ. թիվ ՍԴՈ-816 որոշումը, նշել է, որ «բնօգտագործման վճարը», ի տարբերություն «բնապահպանական վճարի», քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր է և

հանրային բնույթ կրող պարտադիր վճար չի հանդիսանում: Ուստի, բնօգտագործման վճարների կապակցությամբ ծագող իրավահարաբերությունները քաղաքացիաիրավական հարաբերություններ են, որոնք կարգավորող և որոնց մասնակիցների վարքագծի կանոնները սահմանող իրավական նորմերի ամբողջության հիմքում ընկած են այնպիսի հիմնարար և ելակետային դրույթներ, որպիսիք են նաև կամքի ինքնավարությունը և պայմանագրի ազատությունը:

Դատարանը նշում է, որ քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների պարտավորություններն իրենց ինստիտուցիոնալ և բովանդակային էությամբ, ինչպես նաև ծագման հիմքերով միանգամայն տարբերվում են պետաիշխանական լիազորություններով օժտված մարմնի կողմից օրենքի հիման վրա հանրային իրավահարաբերություններից բխող գործադիր կարգադրիչ գործառույթի իրականացման արդյունքում ընդունվող վարչական ակտով ֆիզիկական կամ իրավաբանական անձին առաջադրվող պարտականություններից և պարտավորություններից, մասնավորապես՝ հանրային իրավական դրամական պահանջներից, ու որևէ կերպ չեն կարող նույնական լինել դրանց հետ:

Դատարանն ընդգծել է, որ ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2009թ. թիվ ՍԴՈ-816 որոշման՝ բնօգտագործման վճարը, հանդիսանալով պետության՝ որպես քաղաքացիաիրավական հարաբերության մասնակցի՝ ընդերքի սեփականատիրոջ, և ընդերքաօգտագործողի միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա պետության սեփականությունը հանդիսացող ընդերքի օգտագործման դիմաց գանձվող վճար, իրենից ներկայացնում է քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր, և չի հանդիսանում հանրային բնույթ կրող՝ պարտադիր վճար: Միաժամանակ, բնօգտագործման վճարներ վճարողների կողմից այդ վճարների գումարները հաշվարկելուն ուղղված գործունեությունն իրենից ներկայացնում է սեփականատիրոջ՝ պետության առջև տնտեսավարող սուբյեկտի պայմանագրային պարտավորությունների կատարումն ապահովող գործունեություն, որը չի ներառվում տնտեսավարող սուբյեկտի «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության բովանդակային ծավալներում, հետևաբար, մասնավորապես՝ բնօգտագործման վճար վճարողների կողմից վճարների հաշվարկման և վճարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս հարկային մարմինը վերահսկում է ոչ թե տնտեսավարող սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեությունը, այլ վերջինիս կողմից սեփականատիրոջ առջև ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարումը:

Դատարանի գնահատմամբ 27.01.2017թ. դրությամբ գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի դրույթի իրավակարգավորման հետևանքով տեղի է ունենում ընդերքի սեփականատեր, պայմանագրի կողմ հանդիսացող պետության և ընդերքաօգտագործող տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված քաղաքացիաիրավական հարաբերությունների փոխակերպում, քանի որ վարչարարության իրականացման արդյունքում որպես վարչական մարմին գործող

հարկային մարմինը, տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ կայացնելով վարչական ակտ և այդ ակտով տնտեսավարողին առաջադրելով բնօգտագործման վճարի՝ մասնավորապես, ռոյալթիի գծով որոշակի գումարի վճարման պարտավորություն, ըստ էության, ձևափոխում է 18.07.2009թ. թիվ ՍԴՈ-816 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշման համաձայն՝ ընդերքի սեփականատիրոջ, այն է՝ պետության, որն այդ իրավահարաբերություններում գործում է լիազորված մարմնի միջոցով, և ընդերքն օգտագործողի միջև կնքված համապատասխան քաղաքացիրավական պայմանագրի հիման վրա վճարվող, պետության սեփականությունը հանդիսացող սահմանափակ ռեսուրսի՝ ընդերքի օգտագործման դիմաց տրվող վարձավճար հանդիսացող բնօգտագործման վճարի, որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների տարրի բնույթն ու, ըստ էության, այն դարձնում է բացառապես հանրային իրավահարաբերություններից բխող՝ հանրային իրավական դրամական պահանջ: Նման մոտեցումը, ըստ Դատարանի, հակասում է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին:

Վիճարկվող «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2018թ.) 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության կապակցությամբ Դատարանը նշել է, որ որպես նշված օրենքի պահանջները խախտելու համար սահմանված պատասխանատվության միջոց, օրենսդիրը հարկային մարմիններին իրավասություն է վերապահել վերահաշվարկելու արտադրանքի իրացումից հասույթի մեծությունն այն դեպքում, երբ հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների ընթացքում պարզվում է, որ ռոյալթի վճարողների կողմից հաշվետու տարին ներառող յուրաքանչյուր ամսվա արդյունքներով արտադրանքի իրացումից հասույթը 10 տոկոս և ավելի չափով ցածր է նույն ամսվա արդյունքներով խտանյութի միջազգային միջին գների հիման վրա հաշվարկված հասույթի մեծությունից: Ընդ որում, վերաքննիչ դատարանը նշում է, որ վիճարկվող օրենքում բացակայում է նաև «խտանյութի միջազգային միջին գներ» եզրույթի էությունն ու նշանակությունը սահմանող իրավակարգավորումը:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ռոյալթի վճարողների համար խտանյութի՝ որպես արտադրանքի իրացումից հասույթը խտանյութի միջազգային միջին գների հիման վրա կամ դրանց հաշվառմամբ որոշելու պարտականություն օրենքով և դրա հիման վրա ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված կարգով սահմանված չլինելու պայմաններում հարկային մարմիններին նաև խտանյութի իրացումից հասույթի մեծությունը վերահաշվարկելու և դրա արդյունքում ռոյալթի վճարողներին, որպես պատասխանատվության միջոց առաջադրելու իրավասություն վերապահող Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորումն առաջացնում է իրավական անորոշություն:

Ելնելով վերոգրյալից՝ Դատարանը խնդրել է 27.01.2017թ. դրությամբ գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի և 27.01.2017թ. դրությամբ

գործող խմբագրությամբ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2018թ.) 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության դրույթները ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին հակասող և անվավեր:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Վիճարկվող իրավակարգավորումների, մասնավորապես՝ 27.01.2017թ. դրությամբ գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի բովանդակությունը հետևյալն է.

4. Ստուգումները կարող են լինել թեմատիկ՝ ուղղված տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված առանձին տարրերի փաստացի իրավիճակը պարզելուն, կամ համալիր՝ ուղղված տնտեսավարող սուբյեկտի ամբողջ ֆինանսատնտեսական գործունեության փաստացի իրավիճակը պարզելուն: Թեմատիկ են ընդերքօգտագործման և բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման, այդ թվում՝ բնապահպանական հարկով հարկման բազայի և (կամ) բնօգտագործման վճարի բազայի փաստացի ծավալների ու դրանց չափաքանակների (սահմանափակումների) ստուգումները,....:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2018թ.) 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝

Եթե հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների ընթացքում պարզվում է, որ ռոյալթի վճարողների կողմից հաշվետու տարին ներառող յուրաքանչյուր ամսվա արդյունքներով արտադրանքի իրացումից հասույթը 10 տոկոս և ավելի չափով ցածր է նույն ամսվա արդյունքներով խտանյութի միջազգային միջին գների հիման վրա հաշվարկված հասույթի մեծությունից, ապա հարկային մարմինները վերահաշվարկում են իրացումից հասույթի մեծությունը՝ այդ ամսվա համար կիրառելով խտանյութի միջազգային միջին գների 90 տոկոսը՝ հիմք ընդունելով ֆինանսների բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի կողմից Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա տվյալ ամսվա համար հայտարարված գինը:

Գիտավերլուծական կենտրոնը գտնում է որ վիճարկվող իրավադրույթների սահմանադրականության գնահատումն առաջին հերթին կախված է «**բնօգտագործման վճար**» հասկացության իրավական բնորոշումից և նշանակությունից:

Այսպես, «Բնօգտագործման վճարի» հասկացությունը տրված է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում, որի երկրորդ պարբերության համաձայն՝

Բնօգտագործման վճարը՝ պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև բնական պաշարների օգտագործումը փոխհատուցելու նպատակով այդ պաշարների օգտագործման և (կամ) իրացման համար սույն օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճարն է:

Համաձայն նույն օրենքի 5-րդ հոդվածի՝

Բնօգտագործման վճարի տեսակներն են՝

դ) ռոյալթին՝ արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար:

Համաձայն նույն օրենքի 7-րդ հոդվածի՝

Բնապահպանական վճարների դրույքաչափերը սահմանվում են օրենքով, իսկ բնօգտագործման վճարներին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Նշված օրենքի 13.1 հոդվածի համաձայն՝ (Ռոյալթիի հասկացությունը)

Ռոյալթին մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակով, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացումից ստացվող բարձր շահութաբերության համար սույն օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է:

Նշված օրենքի 13.3 հոդվածի համաձայն՝ (Ռոյալթիի հաշվարկման բազան)

1. Ռոյալթիի հաշվարկման բազա է համարվում հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված՝ հանքարդյունաբերության արտադրանքի իրացումից հասույթը՝ առանց ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ իրացումից հասույթ):

2. Սույն օրենքի իմաստով հանքարդյունաբերության արտադրանք է համարվում մետաղի խտանյութը (այսուհետ՝ խտանյութ):

3. Եթե իրացվում է ոչ թե խտանյութը, այլ ձուլվածքը կամ խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքը (այսուհետ՝ խտանյութի հետ միասին՝ արտադրանք), ապա սույն հոդվածով սահմանված կարգով ռոյալթիի հաշվարկման բազայի որոշման համար հիմք է ընդունվում մատակարարված արտադրանքում պարունակվող կամ օգտագործված խտանյութի հաշվարկային մեծությունը:

4. Սույն հոդվածին համապատասխան՝ իրացումից հասույթի հաշվարկման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝

2. Ընդերքն օգտագործելիս կատարվում են հետևյալ վճարները՝

4) պետական սեփականություն համարվող բնական պաշարների օգտագործման համար բնօգտագործման վճարներ, այդ թվում՝ արդյունահանված մետաղական օգտակար հանածոների կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման համար ռոյալթի...:

Այսպիսով, ըստ վերոնշյալ օրենսդրական կարգավորումների՝ բնօգտագործման վճարը Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող բնական պաշարների օգտագործման դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է:

Հարկ է նշել, որ բնօգտագործման վճարերի էության և նշանակության խնդիրը քննարկման առարկա է դարձել նաև ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից:

Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2009թ. թիվ ՍԴՈ-816 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ ««Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ իրավակարգավորման համապետքստում բնօգտագործման վճարը, հանդիսանալով գույքի օգտագործման դիմաց գանձվող վճար, իրենից ներկայացնում է քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր, և որպես այդպիսին նման գումարի գանձման համար իրավական հիմք է հանդիսանում ընդերքի սեփականատիրոջ, այն է՝ պետության, որն այդ իրավահարաբերություններում գործում է լիազորված մարմնի միջոցով, և ընդերքն օգտագործողի միջև կնքված համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագիրը ... :

Օրենսդիրը բնօգտագործման վճար սահմանելիս՝ այն դիտարկել է որպես պետության սեփականությունը հանդիսացող սահմանափակ ռեսուրսի՝ ընդերքի օգտագործման դիմաց տրվող վարձավճար, և վերջինիս վճարման հետ կապված իրավահարաբերություններին տվել է քաղաքացիաիրավական հարաբերություններին բնորոշ իրավակարգավորում, որտեղ խնդրո առարկա վճարը դիտարկել է որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր: Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի վիճարկվող հոդվածում նշված բնօգտագործման վճարները չեն հանդիսանում պարտադիր վճարներ և, հետևաբար, ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածում ամրագրված՝ պարտադիր վճարների տեսակները, չափը և վճարման կարգը միայն օրենքով սահմանելու պահանջը չի կարող վերագրվել բնօգտագործման վճարներին:»:

Վերը նշված օրենսդրական կարգավորումների և ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշումից հետևում է, որ բնօգտագործման վճարների՝ որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների տարրի նկատմամբ կիրառելի է քաղաքացիական օրենսդրությունը, ինչը նշանակում է, որ բնօգտագործման վճարների սահմանման, դրանց հաշվարկման, վճարման, ճշգրտման, այդ հարաբերություններում ընդերքի սեփականատիրոջ՝ պետության իրավունքների պաշտպանության

եղանակների նկատմամբ գործում է քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված իրավական ռեժիմը, այդ թվում՝ կամքի ինքնավարության և պայմանագրի ազատության սկզբունքները:

Այլ կերպ ասած՝ բնօգտագործման վճարների վճարման կապակցությամբ ծագող հարաբերությունները քաղաքացիաիրավական մասնավոր, այլ ոչ թե վարչական հանրային իրավահարաբերություններ են: Ուստի, այդ հարաբերությունների նկատմամբ վարչաիրավական կարգավորումներն ու ինստիտուտները, այդ թվում՝ ստուգումների և հանրային իրավական դրամական պահանջների ինստիտուտները կիրառելի չեն:

Ինքնին, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ *նշված օրենքը չի տարածվում պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված քաղաքացիաիրավական գործարքների հիման վրա պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված պայմանագրի շրջանակներում պետական մարմնի կողմից որպես գործարքի կողմ իրականացվող ստուգումների վրա:*

Այսպիսով, գտնում ենք, որ օրենսդրությունը ի դեմս «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի, բնօգտագործման վճարների մասով նախատեսել է նախ, հակասական իրավական կարգավորում՝ մի դեպքում այն դիտարկելով որպես ոչ պարտադիր վճար, քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր (ըստ սահմանադրական դատարանի վերոնշյալ մեկնաբանության)՝ սահմանափակելով այդ կապակցությամբ ծագող հարաբերությունների նկատմամբ նշված օրենքի ներգործությունը, մյուս կողմից՝ վիճարկվող «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի դրույթում նախատեսելով հարկային մարմինների կողմից բնօգտագործման վճարի բազայի փաստացի ծավալների ու դրանց չափաքանակների (սահմանափակումների) ստուգման հնարավորություն:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքը 13.9 հոդվածի համաձայն (Ռոյալթիի հաշվարկման և վճարման նկատմամբ հսկողությունը)՝

*Ռոյալթիների հաշվարկման և վճարման նկատմամբ **հսկողությունն** իրականացնում են Հայաստանի Հանրապետության հարկային մարմինները:*

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով՝ **Ստուգման նպատակը** տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա պետական մարմիններին ներկայացված կամ հրապարակված հաշվետվությունների արժանահավատությունը պարզելը, Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ **պետական հսկողություն իրականացնելն է...**:

Վերոնշյալ իրավակարգավորումներից հետևում է, որ հարկային մարմինները ռոյալթիների հաշվարկման և վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստուգումներ կազմակերպելու և անցկացնելու ճանապարհով:

Հարկ է նկատել, որ նշված օրենքի հիման վրա իրականացվող ստուգումն իր էությամբ **վարչարարություն է**, որի իրականացման կապակցությամբ ծագող հարաբերությունները վարչական հանրային իրավական հարաբերություններ են, որտեղ պետության կողմից լիազորված, իշխանական լիազորություններով օժտված իրավասու պետական մարմիններն իրականացնում են գործադիր-կարգադրիչ գործառույթներ: Մինչդեռ, բնօգտագործման վճարները, ինչպես արդեն նշել ենք, քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր են, որոնց կապակցությամբ պետության և ընդերաօգտագործողի միջև հարաբերությունները, կապված այդ վճարների հաշվարկման և վճարման հետ, քաղաքացիաիրավական հարաբերություններ են, որի իրավահավասար մասնակիցները օժտված են կամքի ինքնավարությամբ և գործելու ազատությամբ: Հետևաբար, այդ քաղաքացիաիրավական հարաբերությունների նկատմամբ անհամատեղելի է վարչարարության կիրառումն այնքանով, որքանով քաղաքացիական իրավահարաբերությունների նկատմամբ վարչական հանրային իրավունքի սկզբունքները կիրառելի չեն: Հանրային և մասնավոր իրավունքների այս հակասական և անհամատեղելի համադրությունն ըստ էության ստեղծում է իրավական անորոշություն:

Այստեղ հարկ է մեջբերել ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2009թ. թիվ ՍԴՈ-816 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը, համաձայն որի «բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողների կողմից բնապահպանական և բնօգտագործման վճարների գումարները հաշվարկելուն ուղղված գործունեությունն իրենից ներկայացնում է **սեփականատիրոջ՝ պետության առջև տնտեսավարող սուբյեկտի պայմանագրային պարտավորությունների կատարումն ապահովող գործունեություն**, որը չի ներառվում տնտեսավարող սուբյեկտի «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության բովանդակային ծավալներում: Հետևաբար, բնապահպանական և բնօգտագործման վճար վճարողների կողմից վճարների հաշվարկման և վճարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս հարկային մարմինը վերահսկում է ոչ թե տնտեսավարող սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեությունը, այն է՝ գույքի օգտագործման, ապրանքների վաճառքի, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ընթացքը և դրա համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, այլ վերջինիս կողմից սեփականատիրոջ առջև ստանձնված **պայմանագրային պարտավորությունների կատարումը**: Ըստ այդմ էլ, Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ կետը չի պարտադրում, որ պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ

հսկողության կամ վերահսկողության և դրանց իրականացման համար անհրաժեշտ մյուս գործողությունների իրականացման կարգերը սահմանվեն օրենքով: Դրանք կարող են սահմանվել նաև կառավարության որոշմամբ»:

Այսպիսով, **քննարկվող հակասական իրավակարգավորումները՝ իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին չհամապատասխանելուց զատ՝ հակասում են նաև ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2009թ. թիվ ՍԴՈ-816 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին, որոնք բովանդակում են նաև դատարանի մեկնաբանությունները սույն գործով քննարկվող հարցերի՝ մասնավորապես «բնօգտագործման վճարների» և դրանց կապակցությամբ ծագող հարաբերությունների վերաբերյալ:**

Իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքը

Ինչպես արդեն նշել ենք ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնի կողմից մի շարք սահմանադրական վեճերով տրված կարծիքներում, ՀՀ Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին:

Մասնավորապես, 15 նոյեմբերի 2011թ. թիվ ՍԴՈ-997 որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է. «2004թ. դեկտեմբերի 21-ի՝ Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (*Busuioc v. Moldova*) վճռում, մասնավորապես, Եվրոպական դատարանը գտավ, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները: Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ **անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է:** Միաժամանակ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ զրպարտությանն առնչվող օրենքները՝ պատվի և արժանապատվության իրենց շեշտադրմամբ, **անխուսափելիորեն ներառում են անորոշության որոշակի աստիճան:** Այնուամենայնիվ, դա չի զրկում նրանց իրենց «իրավական բնույթից»՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի նպատակների համար: Ներպետական մարմինների խնդիրն է կիրառել և մեկնաբանել ներպետական օրենքները»:

ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1265, 19 ապրիլի 2016թ. որոշման համաձայն՝ «ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև եվրոպական դատարանի կողմից արտահայտված այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ «նորմը չի կարող համարվել «օրենք» քանի դեռ այն ձևակերպված չէ բավարար որոշակիությամբ, որպեսզի քաղաքացուն հնարավորություն տա կարգավորել իր վարքագիծը: Նա պետք է ի վիճակի լինի, անհրաժեշտության դեպքում համապատասխան խորհրդի օգնությամբ, այդ հանգամանքներում ողջամիտ աստիճանի կանխարեսել այն հետևանքները, որոնց նշված գործողությունը կարող է հանգեցնել» (CASE OF MICHAUD v. FRANCE (Application no. 12323/11))»:

Կամ, ՍԴՈ-1270, 3 մայիսի 2016թ. որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման մեջ սահմանադրական դատարանը նշել է.

«7. ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի **գերակայությունը**, որի ապահովման գլխավոր պահանջներից են **իրավական որոշակիության սկզբունքը**, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի **օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝** հստակ են, կանխարեսելի, մատչելի:

ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՍԴՈ-630, ՍԴՈ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխարեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում:

Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս դիրքորոշում է արտահայտել առ այն, որ՝ «Չնայած այն բանին, որ սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց՝ իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պարճառով, հաճախ օրենքներում առկա են տերմիններ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է» (**The Sunday Times v. the United Kingdom** (Application no. 6538/74, 26/04/79, § 49):

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պարկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին»:

ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1176 և ՍԴՈ-1213 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համաձայն՝ «... իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» և «... իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Սույն սահմանադրական գործի շրջանակներում վիճարկվող օրենքները, մեր կարծիքով, չեն համապատասխանում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին, քանի որ հակասական իրավական կարգավորումներն օրենքի հասցեատերերի համար անկանխատեսելի են դարձնում իրենց իրավաչափ սպասելիքները:

Մասնավորապես, ընդերքաօգտագործողների համար ի վերջո հստակ չէ, թե ընդերքի օգտագործման կապակցությամբ ընդերքի սեփականատիրոջ՝ պետության հետ վերջիններս գտնվում են քաղաքացիաիրավակա՞ն, թե՞ վարչաիրավական հարաբերությունների մեջ, ընդերքաօգտագործման վճարները պարտադի՞ր, թե՞ ոչ պարտադիր վճարներ են, այդ վճարների հաշվարկման և բռնագանձման նկատմամբ կիրառվում է քաղաքացիաիրավակա՞ն, թե՞ վարչաիրավական ռեժիմը:

Նույն հիմնավորումներով, սույն գործով վիճարկվող «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության իրավական որոշակիությունը խնդրահարույց է հատկապես այն հաշվով, որ բնօգտագործման վճարների՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր սահմանելու հետ միաժամանակ, օրենսդիրը նշված դրույթում սահմանել է հարկային մարմինների իրավասությունը վերահաշվարկելու արտադրանքի իրացումից հասույթի մեծությունը (բնօգտագործման վճարների հաշվարկման բազան)՝ կիրառելով խտանյութի միջազգային միջին գները:

Նման իրավակարգավորումը հակասում է պայմանագրի ազատության և կամքի ինքնավորության քաղաքացիաիրավական սկզբունքներին և ի վերջո հանգեցնում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի խախտման: Բանն այն է, որ չնայած ընդերքաօգտագործման պայմանագրի մի կողմը՝ ռոյալթի վճարողը, պայմանագրի մյուս կողմի՝ պետության՝ որպես ընդերքի սեփականատիրոջ հետ պայմանավորվում է ընդերքի օգտագործման որոշակի գին (բնօգտագործման վճար),

միևնույն է, այդ գինը, փաստորեն, պետության կողմից կարող է միակողմանիորեն փոփոխվել ռոյալթի վճարողի համար անկանխատեսելի հանգամանքներում՝ կախված խտանյութի միջազգային միջին գների ցուցանիշներից: Հետևաբար, ռոյալթի վճարողները պետության հետ մտնելով քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ՝ չեն կարող ի սկզբանե իրենց վարքագիծը համադրել որոշակի նորմատիվ պահանջի հետ, որպեսզի իրենց համար առաջանան կանխատեսելի իրավաչափ սպասելիքներ:

Բացի այդ, ինչպես արդարացիորեն նկատել է Դիմողը, գործող օրենսդրությամբ առկա չէ նաև որևէ հստակեցում կամ պարզաբանում, թե որն է «խտանյութի միջազգային միջին գներ» եզրույթի էությունը և նշանակությունը, իրավական ինչպիսի եղանակով այն պետք է որոշվի և հաշվարկվի, ինչն առաջացնում է իրավական որոշակիություն:

Հարկ է նկատել նաև, որ քննարկվող իրավակարգավորումների իրավական անորոշությունը վտանգում է նաև տնտեսական գործունեության ազատության և սեփականության սահմանադրական իրավունքները:

Սահմանադրական դատարանի որոշումների բնույթն ու իրավաբանական նշանակությունը

Հաշվի առնելով, որ սույն սահմանադրական գործով քննարկվող հարցերն, ըստ էության, արդեն իսկ քննարկման առարկա են դարձել ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2009թ. թիվ ՍԴՈ-816 որոշմամբ, որում դատարանն, ի թիվս այլ հարցերի, իր դիրքորոշումն է արտահայտել նաև սույն գործով քննարկվող և վեճի առարկան կազմող հարցերի վերաբերյալ, ուստի, գտնում ենք, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը գնահատելիս կարևոր նշանակություն ունի Սահմանադրական դատարանի նշված որոշման բնույթի և իրավաբանական նշանակության խնդիրը քննարկելը սույն սահմանադրական վեճի շրջանակներում:

Այսպես, 25.02.2011թ. թիվ ՍԴՈ-943 որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «...Սահմանադրական դատարանի որոշումները ենթակա են կատարման անհապաղ (կամ դատարանի կողմից նախանշված ժամկետներում) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և ենթակա չեն քննարկման (վիճարկման, քննության) պետական, տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի, կազմակերպության կամ անհատի կողմից:

Սահմանադրական դատարանի որոշումն իրենից ներկայացնում է ՀՀ Սահմանադրությամբ, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իր լիազորությունների շրջանակներում ընդունված պաշտոնական գրավոր փաստաթուղթ, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության,

կարարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պարասխանադրություն, սահմանափակումներ, իրավաբանական տեսակետից անվիճարկելի (վերանայման ոչ ենթակա), առանց նախապայմանների, անվերապահ և անհապաղ (եթե այլ ժամկետ չի սահմանվել) կարարման ենթակա նորմատիվ կանոններ, այսինքն՝ վարքագծի կանոններ: Դրանով է պայմանավորված սահմանադրական դատարանի որոշումների նորմատիվ բնույթը, ինչպես նաև այդ ակտերին անմիջականորեն հաջորդող իրավական առանձնահատուկ հետևանքները՝ կապված հակասահմանադրական ճանաչված իրավանորմի իրավաբանական ուժը կորցնելու, սահմանադրական նորմերի մեկնաբանման (իրավական դիրքորոշումների) շրջանակներում իրավանորմը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու, ինչպես նաև սահմանադրաիրավական նշանակություն ունեցող խնդիրներին լուծում ու փաստերին գնահատական տալու հետ (ՀՀ Սահմ. 100-րդ հոդվածի 3-9-րդ կետեր):»:

ՀՀ Սահմանադրական դատարանի 28.03.2017թ. թիվ ՍԴՈ-11359 որոշման համաձայն՝ «Վերոհիշյալ իրավական դիրքորոշման հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **Սահմանադրական դատարանի՝ իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշման իրավական հետևանքը պայմանավորված չէ տվյալ իրավական դիրքորոշման՝ Սահմանադրական դատարանի որոշման այս կամ այն մասում ամրագրված լինելու փաստով:** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում»:

«Բացի դրանից, Սահմանադրական դատարանի որոշման, որպես պաշտոնական **ամբողջական** փաստաթղթի իրավաբանական ուժի առանձնահատկությունը, որպես նաև ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածը՝ իր սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան ընկալելու և կիրառելու երաշխիք, մանրամասնված է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում: **Հիշյալ նորմատիվ կարգավորումների հիմքում դրված է իրավական այն սկզբունքը, համաձայն որի՝ որպես իրավական հետևանքներ առաջացնող պաշտոնական փաստաթուղթ, պետք է առաջնորդվել ոչ թե միայն Սահմանադրական դատարանի որոշման կառուցվածքային մաս հանդիսացող այս կամ այն դրույթով, կամ՝ բացառապես եզրափակիչ մասով, այլ ողջ որոշմամբ,** հիմք ընդունելով վերջինիս ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասերում արտահայտված իրավական դիրքորոշումները: ...

8. Միջազգային սահմանադրաիրավական պրակտիկան նույնպես վկայում է, որ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներն արտահայտվում են որոշման ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասերում:

Ավելին, սահմանադրական արդարադատության ժամանակակից պրակտիկան վկայում է, որ սահմանադրական դատարանի որոշումների եզրափակիչ մասում հաճախ արձանագրվում է ոչ միայն իրավական ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանելու կամ չհամապատասխանելու հանգամանքը, այլև ամրագրվում են դատարանի այլ եզրահանգումներ: Ակնհայտ է, որ դրանք ինքնին ներկայացնում են հիշյալ մարմնի վերաբերմունքը կոնկրետ սահմանադրաիրավական հիմնախնդիրների առնչությամբ: Քննարկվող հանգամանքն առավել ընդգծվում է ՀՀ սահմանադրական դատարանի այն որոշումներում, որոնց շրջանակներում սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը, վիճարկվող ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, հետաձգում է այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը: Տվյալ պարագայում դատարանն արտահայտում է իր վերաբերմունքը կոնկրետ սահմանադրաիրավական հիմնախնդրի հնարավոր լուծման առնչությամբ, ընդ որում՝ այդ հանգամանքն իր արտահայտությունն է գտնում որոշման սուկ եզրափակիչ մասում:

Սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարումը երաշխավորելու համար անհրաժեշտ է օրենսդրորեն հստակ ապահովել, որպեսզի **հանրային իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորեն դրանց ամբողջության մեջ, հաշվի առնելով ոչ միայն որոշման եզրափակիչ մասը, այլև պատճառաբանական մասում շարադրված իրավական դիրքորոշումները, որոնք սահմանադրական իրավունքի աղբյուր են և իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն»:**

ՀՀ Սահմանադրական դատարանի 15.05.2018թ. թիվ ՍԴՈ-1417 որոշման համաձայն՝ «Սույն գործի շրջանակներում ևս Սահմանադրական դատարանը վերահաստատում է 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-943 որոշման մեջ արտահայտված այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «Սահմանադրական դատարանի որոշումները պետք է ընկալվեն նաև իրենց կառուցվածքային ամբողջության մեջ (նախաբան, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասեր)՝ ապահովելու այդ որոշումներով առաջադրված իրավակարգավորման բովանդակության, սկզբունքների ու առանձնահատկությունների, ինչպես նաև դրանցից բխող օբյեկտիվ և սուբյեկտիվ վարքագծի կանոնների իրացման հստակությունը: Այդ խնդրի իրագործմանն են միտված հատկապես սահմանադրական դատարանի որոշումների նկարագրական-պատճառաբանական մասում արտահայտված **իրավական դիրքորոշումները**, որոնցում, որպես կանոն, բովանդակվում են սահմանադրական դատարանին հասցեագրված դիմումների առարկայի (բարձրացված հարցերի, սահմանադրաիրավական վեճերի) իրավավերլուծության արդյունքում

դադարանի կողմից արված և որոշման եզրափակիչ մասի հիմքում դրված եզրահանգումները, որոնց էության և բովանդակության անփոփոխական դեպքում չի կարող երաշխավորվել դադարանի որոշման կատարումը»:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ սահմանադրական դատարանը 18.07.2009թ. թիվ ՍԴՈ-816 որոշման մեջ իր դիրքորոշումն է արտահայտել բնօգտագործման վճարների և դրանց կապակցությամբ ծագող հարաբերությունների վերաբերյալ՝ այդ վճարները բնորոշելով որպես **քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր:**

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը գտել է, որ բնօգտագործման վճար վճարողների կողմից վճարների հաշվարկման և վճարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս հարկային մարմինը վերահսկում է ոչ թե տնտեսավարող սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեությունը, այլ վերջինիս կողմից սեփականատիրոջ առջև ստանձնված **պայմանագրային պարտավորությունների կատարումը:**

Սահմանադրական դատարանի նշված դիրքորոշումից հետևում է, որ քաղաքացիական պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող՝ ընդերքաօգտագործողի և պետության միջև ընդերքի օգտագործման դիմաց վճարվող բնօգտագործման վճարների հաշվարկման, վճարման, վերահաշվարկման և բռնագանձման կապակցությամբ ծագող հարաբերությունները քաղաքացիաիրավական հարաբերություններ են, որոնց նկատմամբ կիրառելի են ոչ թե վարչաիրավական, այլ քաղաքացիաիրավական կարգավորումները:

Հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված որոշումները՝ գտնում ենք, որ 18.07.2009թ. թիվ ՍԴՈ-816 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, անկախ նրանից, դրանք շարադրված են որոշման նախաբանում, նկարագրական-պատճառաբանական, թե եզրափակիչ մասերում, պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման և կիրառման ենթակա վարքագծի կանոններ են, որոնք պետք է հաշվի առնվեն սույն սահմանադրական վեճի առարկան կազմող հարցերի քննության և վիճարկվող իրավադրույթների մեկնաբանման գործընթացում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- 27.01.2017թ. դրությամբ գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանությունը խնդրահարույց է,

- 27.01.2017թ. դրությամբ գործող խմբագրությամբ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2018թ.) 18-րդ

հողվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանությունը խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան